ԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ
ANNA ADAMYAN

ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՃՅԱՆԻ ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ՎԻՐՏՈՒՈԶ-ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՊԻԵՍՆԵՐԸ. «ՔՈՒԶԻ ՋՐՎԵԺԸ» ԷՔՍՊՐՈՄՏԸ

Տ.Չուխաճյանի ստեղծագործական շնորհի առավել բնորոշ և արտահայտիչ գծերն արտահայտվեցին նաև մեծակտավ դաշնամուրային ստեղծագործություններում: Մեղեդային վառ անհատականության տեր կոմպոզիտորն այստեղ ևս դրսևորել է իր ոճական հատկանիշները: Ըստ տվյալների և ուսումնասիրությունների այս երկերը գրվել են կոմպոզիտորի ստեղծագործական կյանքի հասուն շրջանում, երբ նա արդեն համարձակորեն իրականացնում էր եվրոպական երաժշտությունն արևելյանին պատվաստելու պատմականորեն առաջին փորձերը: Տիրապետելով կոմպոզիտորական տեխնիկայի հզոր զինանոցին, քաջածանոթ լինելով թե եվրոպական, թե արևելյան երաժշտությանը բնորոշ արտահայտչամիջոցներին՝ կոմպոզիտորն ստեղծում է հայկական դաշնամուրային երաժշտության մեջ առաջին վիրտուոզ բնույթի նմուշները. «Քնար արևելյան» (La Lyre oriental) կապրիսը, «Բնութագրական պարը» (Danse caractnristique), «Քուզի ջրվեժը» (Cascade de Couz) էքսպրոմտը, «Անուրջներ» (Grande Valse Fantastique, «Illusions») մեծ ֆանտաստիկ վալսը, Թուրքական մոտիվներով երկու ֆանտազիաները (Fantaisies orientales sur des motifs turcs № 1, 2), «Անընդհատ շարժումը» (Perpetum mobile): Վիրտուոզ-համերգային ստեղծագործությունների հարուստ ու բազմաբնույթ բովանդակությունը հիմնականում արտահայտվում է մասշտաբային ձևերում: Կոմպոզիտորը, նոր ասելիքով և բովանդակությամբ պայմանավորված, փնտրում է երաժշտական արտահայտչական նոր ձևեր, գաղափարների ավելի լիարժեք արտահայտման միջոցներ: Այստեղից էլ՝ մասշտաբայնությունը, ֆակտուրայի հագեցածությունը, ապրումների հոգեբանականացման փորձը: Արևելյան երանգները սկսում են գերակշռել, և ակնհայտ է դառնում արևելյան երաժշտությանը եվրոպական ձև ու հնչողություն հաղորդելու ձգտումը: Կյանքի վերջին, հուսահատ, հոգեկան և ֆիզիկական տանջանքների տարիներին ստեղծված այս հրաշալի ստեղծագործություններում կրկին զգացվում է կոմպոզիտորի ներաշխարհը՝ լի լավատեսությամբ, բարու հաղթանակով, պայծառ տոներով:

«Քուգի ջրվեժը» (Impromptu, Cascade de Couz. Ո ses nlՌves Miles Marie, Eugռnie K. Martirossian[1]) էքսպրոմտը, որը ժամանակին բազմիցս կատարվել է, հրատարակվել է 1887-ին, Կ.Պոլսում[2]: «Քուգի Ջրվէժը կը գտնուի Ֆրանսայի Սավուա Փրոփր նահանգին (province de Savoie propre) մէջ` Շամպէրի օղ Էչէլ ճամբուն (route de Chambe'ry aux Echelles) վրայ: Ժան-Ժաք Ռուսօն այցելելով այնտեղ, «Միայնակ շրջագայողի մտորումներ» գիրքին մէջ զայն կ'ընդունի իբրեւ «ամենագեղեցիկ ջրվէժը զոր տեսած ըլլամ կեանքիս մէջ»: Լամարթին իր «Վստահութիւններ» (Confidences) գիրքին մէջ կը նկարագրէ` թէ Քուգի Ջրվէժը կը գտնուի, հսկայ եւ վտակահոս ստորեզերքին մօտ` ուր յորձանքը ուղղահայացորէն կը տեղայ հովիտին մէջ, պահվըտած սարէն անջատուած մեծ ժայռին մը ետեւ»[3]: Սակայն գոյություն չունի որևէ փաստ, որը հաստատի, թե Չուխաճյանը երբևէ տեսել է այս ջրվեժը, ինչն էլ թույլ է տալիս մտածել, որ ստեղծագործությունը ստեղծվել է նրա վառ երևակայության արդյունքում: Սա կոմպոզիտորի դաշնամուրի համար գրված միակ պիեսն է, որը հրատարակվել է Հայաստանում Ցիցիլիա Բրուտյանի ջանքերով[4]: «Սակայն Բրուտեան զանց կառնէ Քուգի Ջրվէժ խորագիրը եւ կը բաւարարուի միայն երաժշտական սեռի նշանակումով էմփրոմփթիւ, որուն պատճառով քօղարկուած կը մնայ ստեղծագործութեան պատկերաւոր կողմը, որ այնքան էական նշանակութիւն ունէր վիպապաշտներուն մօտ»[5]: Էքսպրոմտի հայաստանյան հրատարակության հիման վրա ամերիկահայ դաշնակահար Շահան Արծրունին իրականացրել է պիեսի ձայնագրությունը: Սկավառակի անգլերեն ծանոթագրություններում նա գրում է, թե «Չուհաճեան կը պահանջէ մատներու վիրթուոզականութեան աստիճան մը` որ կը մրցակցի Մոշքովսքիի E'tincelle-ին հետ, եւ կը յառաջացնէ այնպիսի յուզում մը որ կրնայ թնդացնել համերգասրահը»[6]

[1] Նվիրված է իր սաներին` Մարիա, Եվգենիա Կ. Մարտիրոսյաններին:

[2] Տես «Cascade de Couz» դաշնամուրի համար, Կ.Պոլիս, տպ 8 թերթ, ԳԱԹ Տ.Չուխաճյանի դիվան, թիվ 186: Տիգրան Չուխաճեան, Ստեղծագործութիւններ դաշնակի համար, Գահիրէ, 2005, էջ 48-58:

[3] Տիգրան Չուխաճեան, Ստեղծագործութիւններ դաշնակի համար, Գահիրէ, 2005, էջ XII:

[4] Հայրենաբաղձ հնչյուններ, կազմեց և տպագրության պատրաստեց Ցիցիլիա Բրուտյանը, Երևան, 1964, էջ 26-33:Տես Տիգրան Չուխաճեան, Ստեղծագործութիւններ դաշնակի համար, Գահիրէ, 2005, էջ XXV:

[5] Տիգրան Չուխաճեան, Ստեղծագործութիւններ դաշնակի համար, էջ XII:

[6] An Anthology of Armenian Piano Music [անգլերէն, Ծաղկաքաղ հայկական դաշնակի երաժշտութեան], հատոր 1, դաշնակ Շահան Արծրունի, սկավառակ, 4080, 1979: Տես Տիգրան Չուխաճեան, Ստեղծագործութիւններ դաշնակի համար, էջ XXV:

Ֆրանսահայ կոմպոզիտոր Արա Պարթևյանի բնութագրմամբ՝ «Եւ դեռ ուրիշ սիրելի անուն մը՝ Տիգրան Չուխաճեան, այս վերջինը եթէ անուն շինած է իր համբաւաւոր Լէպլէպիճիով, քիչեր միայն գիտեն որ ան ամէն բանէ առաջ հեղինակ է դաշնակահարային հոյակապ եւ բազմաթիւ ստեղծագործութիւններու, որոնցմէ իր էմփրոմփիւն, եւ որ նոյնքան արժէք կը ներկայացնէ որքան ռոմանթիք շրջանի եւրոպական ոեւէ հեղինակի գործ»[7]: Էքսպրոմտի մասին Ս.Տեր-Սիմոնյանը գրում է. «Ուսուցողա-մանկավարժական պլանի ստեղծագործությունների թվին է պատկանում Քուզի ջրվեժը էքսպրոմտը՝ տպագրված Կ.Պոլսում: Երաժշտությունն այստեղ, ի տարբերություն ֆուգաների, գրավում է վառ մեղեդայնությամբ, ձևի ազատ, անկաշկանդ զարգացմամբ, զարգացած ֆակտուրայով և համեմատաբար հարուստ հարմոնիկ հիմքով: Էքսպրոմտը (b-moll) հստակ եռմասանի ձև է ներկայացնում (Allegro giusto, moderato assai, primo tempo): Ծայրի մասերը գրված են տպավորիչ, համերգային փայլով: Նրանց հակադրվում է ոչ մեծ, ցայտուն մեղեդային լիրիկական էպիզոդը (moderato assai): Ֆակտուրայի, ձևի, երաժշտության բնույթի առումով Չուխաճյանի էքսպրոմտը մոտ է այն ժամանակ եվրոպական երաժշտության մեջ տարածված համերգային էտյուդներին: Հնարավոր է այդ ուղղությամբ որոշակի ազդակ են տվել Մոշելեսի հայտնի էտյուդները, որոնք ուսուցիչներին և աշակերտներին գրավում էին ոչ միայն կոնկրետ տեխնոլոգիական խնդիրներով, այլ նաև բարձր գեղարվեստական արժանիքներով, վառ մեղեդային և հարմոնիկ հիմքով[8]: Պիեսի գեղարվեստական մակարդակը, որն արտացոլում է կոմպոզիտորի լիովին ձևավորված ոճը, հանգեցնում է ենթադրության, որ այն ստեղծվել է նրա արվեստի հասուն շրջանում»[9]:

Ն.Թահմիզյանի կարծիքով՝ «Չուխաճյանի դաշնամուրային գործերում կան նաեւ նմուշներ, որոնցում տուեալ նուագարանի արհեստավարժական եւ արտայայտչական հնարաւորութիւնները օգտագործուած են քաջահմուտ վարպետութեամբ (virtuosity): Այսպիսի նմուշներից է Cascade de Couz (վերջինիս՝ որ տեղի անուն է՝ ջրվէժները կամ վազող ջրերը) կոչուող ստեղծագործութիւնը: Այն ունի (Impromptu) (յանկարծաբանութեամբ յօրինուած) ենթավերնագիրն էլ,

---

[7] Պարթեւեան Ա., Շահան Արծրունի եւ սփիւռքահայ երգահաններու դաշնակային գրականութիւնը. «Արեւ» օրաթերթ, Գահիրէ, 2 սեպտեմ.,1980, 65-րդ տարի, թիւ 18.668, էջ 2:

[8] Մոշելես Ի. (1794-1870) - գերմանացի դաշնակահար և կոմպոզիտոր, մի շարք դաշնամուրային կոնցերտների և սոնատների, էտյուդների, կամերային անսամբլների հեղինակ: Նրա ստեղծագործությունները, հատկապես կոնցերտային էտյուդները, մինչ օրս լայնորեն կիրառվում են մանկավարժության ասպարեզում:

[9] Тер-Симонян М. Фортепианная музыка в творчестве Тиграна Чухаджяна, ձեռագիր, << ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվ, էջ 7-8:

որ աւելի գործի հիւսվածքին եւ ընդհանուր բնութիին է վերաբերում. քան միանգամից ստեղծուած լինելու փաստին: Եւ իրոք, խստորէն պահպանուող (giusto) արագ ընթացքը (Allegro), որը միջին մասում միայն փոխւում է վալսի շարժման, ստեղծագործութեան համօրէն թափն ու փայլուն նկարագիրը, յանկարծաբանութեան բնույթ են հաղորդում դրան»[10]:

Էքսպրոմտին անդրադարձել է նաև Շ.Ափոյանը. «Չուխաջյանի այդ կարգի դաշնամուրային լավագույն երկերից է Cascade de Couz. տեղանուն է և թարգմանաբար նշանակում է վազող ջրվեժներ կամ վազող ջրեր: Այն ունի էքսպրոմտ ենթավերնագիր, բայց հեռու է հանկարծաբանությունից, ունի մտածված շարադրություն: Ստեղծագործության առաջին մասը, արագ ընթացող Allegro giusto, տպավորվում է տարանտելլայի քողարկված ռիթմով և ոլորապտույտ մեղեդային գծով, որին հաջորդում է ավելի հանդարտ, վալսային բնույթի միջին մասը: Կերպարն ավելի ցայտուն է պիեսի վերջին մասում: Վարպետությամբ օգտագործված են հարմոնիան, ռիթմը, դինամիկան, հյուսվածքը, որոնք նպաստում են երաժշտության զարգացմանը դեպի կուլմինացիա (ակորդների թռիչք, օկտավային անցումներ ff): Այս ամենը կարծես ստեղծում է ջրվեժի վառ տեսարան, արտահայտում բերկրանք, ցնծության զգացմունքներ: Երկը փայլուն, վիրտուոզ բնույթի է: Ինտոնացիոն առումով այն արձագանքում է Չուխաջյանի օպերային երաժշտությանը, (առանձնապես «Լեբլեբիջի» կոմիկական օպերային)»[11]: Իր նշանակությամբ էքսպրոմտը Չուխաճյանի դաշնամուրային ստեղծագործության մեջ մի մարգարիտ է՝ պարուրված եթերային նուրբ երանգներով: Նրա հիմնական հատկանիշներն են ռոմանտիկ ոգեշնչումն ու յուրօրինակ վիրտուոզայնությունը: Էքսպրոմտը վկայում է կոմպոզիտորի ստեղծագործական կերպարի որոշ փոփոխությունների մասին: Նկատվում է ձգտումը դեպի համերգային փայլ, վիրտուոզ կատարողականություն և այլն:

Այն սակավ ստեղծագործություններից է, որտեղ կոմպոզիտորը բուն նյութը ներկայացնում է առանց նախաբանի: Սա նաև իմպրովիզացիոն բնույթ է հաղորդում պիեսին, որը սկսում է անբռնազբոս, թեթև շարժմամբ, կարծես ծագելով օդից, անսպասելի և թարմ հնչողությամբ և իրոք իր տրամադրությամբ համապատասխանում է էքսպրոմտ անվանմանը. այնքան ազատ է հորդում հնչյունային ալիքը՝ հաճախ փոխելով կամ հարստացնելով իր դեմքը, ողողվելով տարբեր երանգներով:

---

[10] **Թահմիզեան Ն.**, Տիգրան Չուխաճեան. կեանքը եւ ստեղծագործութիւնը. Փասատենա, 1999. էջ 138:

[11] **Ափոյան Շ.**, Հայկական դաշնամուրային արվեստի պատմություն 1850-1920, Երևան, 2006, էջ 22:

Պիեսն ունի հստակ եռամաս ձև, միջին հակադրվող մասի առկայությամբ: Ֆակտուրային հյուսվածքով հիշեցնում է Մոշկովսկու էտյուդները:

Նվագակցությունը բասում կրում է հարմոնիկ-ակորդային բնույթ ուղեկցելով մեղեդու ազատ ծավալմանը: Այն երբեմն սահուն կերպով ակորդայինից անցում է կատարում հորիզոնական շարժման՝ միանալով աջ ձեռքին և պահանջում ձեռքերի վայրկենական համադրում և ճկունություն: Մեղեդին նրբագեղ և անբռնազբոս է, «պաստելային» երանգների մեջ: Դինամիկան նույնպես նպաստում է այսպես կոչված «գույների խաղին», P-ից dim, rit.-յով նորից P, դեպի cresc և այդպես շարունակ: Կոմպոզիտորը ստեղծում է երանգների խաղ, չկա հստակ f, գերիշխում են «շղարշային» գույները:

Տեխնիկական հնարները բազմաբնույթ են, կիրառվում է «մատնային» տեխնիկա, որտեղ համադրվում են թռիչքային շարժումներ, վեր և վար, արպեջոյատիպ, քրոմատիկ, նաև տարբեր ինտերվալներով, ընդհուպ մինչև օկտավա: Այս ամենը պահանջում է դաստակի ճկուն և փափուկ օգտագործում: Տեխնիկական այս հնարների շնորհիվ ևս ստեղծվում է ջրվեժի հնչողական տպավորություն, անընդհատ հոսող ջրի բարեհնչյուն ձայնը:

Օգտագործված են տոնայնական տարբեր անցումներ, որոնք ավելի շատ հնչողական նրբերանգներ ստեղծելու համար են, քան թե կատարում են կերպարային փոփոխության սկզբունքի դեր. b-moll-ից անցում է կատարվում դեպի E-dur, որին հետևում է e-moll-ը, և արդեն հնչողական ծավալի ընդլայնման, թռիչքների շնորհիվ ստեղծված ալիքային կասկադները բերում են դեպի միջին էպիզոդ, որտեղ B-dur տոնայնությունն է՝ կոնտրաստ ստեղծելով ծայրի երկու վիրտուոզ հատվածների միջև: Միջին Moderato assai հատվածը թեթև, անկաշկանդ ծավալմամբ տիպիկ չուխաճյանական պարային էպիզոդ է, որը գերում է հեղինակին բնորոշ արտահայտչամիջոցների օգտագործմամբ, պայծառ, լավատեսական գույներով, գեղեցիկ հարմոնիկ համադրումներով:

Առհասարակ, պարային հատվածները մեծ դեր են խաղում Չուխաճյանի թե դաշնամուրային, թե օպերային ստեղծագործության մեջ: Այս վալսատիպ հատվածի առկայությունը դաշնակահարին նաև հնարավորություն է ընձեռում մի փոքր «շունչ առնել» և հանգստացնել ձեռքերը վիրտուոզ մասերի միջև: Երաժշտական նյութը հիմնվում է մեկ թեմայի զարգացման վրա:

Ֆակտուրան լայն է և թափանցիկ: Երբեմն ստեղծվում է բազմաձայնություն. վերին ձայն, միջին և բասային ակորդային հարմոնիկ հիմք: Իհարկե, երաժշտական նյութի զարգացմանը զուգընթաց այս ամենը կրում է որոշակի փոփոխություններ, մեղեդային գիծը կարող է փոխանցվել բասին և այլն: Հատվածի վերջում ֆա հնչյունի, որը նաև դոմինանտային է հանդիսանում b-

moll-ի համար, ռեպետիցիոն հնարով նախապատրաստվում է եզրափակիչ ռեպրիզային հատվածի մուտքը, նույնացվում է մետրա-ռիթմական պատկերը, և սահուն անցում է կատարվում դեպի Primo Tempo եզրափակիչ մաս:

Այս կրկնության հատվածում տոնայնությունը չի հեռանում հեռավոր տոնայնություններ, այլ անցում է կատարում դեպի F-dur, որի միջոցով նորից վերադառնում է սկզբնական տոնայնությունը Կոդայում:
Թեև կոմպոզիտորը վերջին կտորի համար նշում չի կատարել որպես Coda, սակայն ակնհայտորեն սա կոդա է, որտեղ խտացված ցուցադրվում են բոլոր արտահայտչամիջոցները, թե մելոդիկ, թե ռիթմիկ, թե ֆակտուրային հնարները: Մեղմ և անկաշկանդ հնչողությունը վերաճում է հզոր ff-ի lento նշումով, այսինքն ոչ միայն դինամիկ, այլև տեմպային փոփոխության շնորհիվ ստեղծվում է ազդեցիկ, փայլուն և վիրտուոզ մի վերջաբան, որն ավարտվում է con fuoco դեպի վեր տանող սրընթաց պասսաժով և եզրափակող fff ակորդային հնչողությամբ: «Քուզի ջրվեժը» էքսպրոմտի կատարումը դաշնակահարից պահանջում է տեխնիկապես անթերի հաղթահարում: Պետք է հնչեն բոլոր նոտաները, բավական ակտիվ տեմպում լսվեն բոլոր անցումները: Կարևոր է ծեռքերի ճկուն օգտագործումը, թե դաստակի, թե մատների ակտիվությունը:

➢ Դժվարություն կարող է առաջացնել նաև հենց սկզբից ճիշտ տեմպով մուտք գործելը, քանի որ միանգամից բուն նյութը անհրաժեշտ տեմպում պետք է շարադրվի: Պետք է մտքում նախօրոք պատրաստել տեմպը: Հատկապես խնդիրը բարդանում է նաև P շտրիխի պատճառով, որպեսզի հենց առաջին նոտայից երաժշտական նյութը լսելի լինի և ակտիվ հնչի:

➢ Բասը պետք է օգնի ռիթմիկ մնալ, կարգավորի տեմպային վայրիվերումները, որպեսզի շարժումը առաջ չսլանա «անսանձ», միևնույն ժամանակ չլինի դանդաղկոտ կամ արգելակված:

➢ Ցանկալի է, որ տոնայնական փոփոխությունները բերեն նաև հնչողական փոփոխությունների, պետք է լսել և զգալ փոփոխությունը, սահուն անցնելով մեկից մյուսին:

➢ Քանի որ դինամիկ նշանները հատկապես crescendo-ն և diminuendo-ն, անընդհատ շարժման ժամանակ առկա են, կարևոր է նաև չարագացնել և չդանդաղել, այսինքն դինամիկան տեմպի վրա ազդեցություն չպետք է ունենա:

➢ 69-րդ տակտից, երբ սկսվում է շարադրվել միջին վալսային էպիզոդը, կարևոր է տրամադրության փոփոխությունը, ստեղծել տոնական, անբռնազբոս, թեթև հնչողություն:

➢ Ռեպրիզային հատվածից հետո վերջաբանում ակորդային թռիչքները պետք է լինեն մաքուր, կանոնավոր, սակայն հզոր հնչողությամբ, պունկտիր-

ները հնչեցնելով ռիթմիկ: Հետգհետե 185-րդ տակտից սկսած գնալ դեպի արագացում և տոնական հնչողությամբ ավարտել պիեսը, փոխանցելով փայլուն-կոնցերտային տրամադրությունը:

Այսպիսով՝ «Քուզի ջրվեժը» էքսպրոմտը վիրտուոզ ստեղծագործություն է, բուն դաշնամուրային մտածողությամբ, որից, սակայն, չի տուժում պիեսի գաղափարական կողմը: Կատարողական առումով այն պահանջում է թեթև, նվագող մատներ, արագ մասերում հատկապես շատ հավասար: Միջին մասը շքեղ է, առաջին հայացքից ինտոնացիոն և ռիթմիկ առումով թվում է վալսային, սակայն այն ավելի շուտ մազուրկա է, որտեղ նույնպես առկա է rubato-ն: Շարժումը զարգանալով հանգեցնում է վերջաբանին, կարողանում է սեղմ ժամանակում հասնել իր գագաթնակետին: Եվ ինչպես նկատում է Ա. Բաբախանյանը՝ «Խորհուրդ է տրվում կատարել պիեսը որպես բիսային համար: Այն Չուխաճյանին ներկայացնում է որպես վիրտուոզ»[12]:

2012-ին ՀՀ վաստակավոր արտիստ, միջազգային մրցույթների դափնեկիր տաղանդավոր դաշնակահար Արմեն Բաբախանյանը նոր կյանք տվեց «Քուզի ջրվեժը» էքսպրոմտին՝ այն ընդգրկելով «Հայ դաշնամուրային երաժշտության անթոլոգիայի» առաջին հատորի առաջին խտասալիկում՝ ի շարս Չուխաճյանի դաշնամուրային ևս 9 պիեսների[13]. Ի դեպ, Անթոլոգիայի՝ 2012թ. դեկտեմբերի 21-ին Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի ունեցած շնորհանդեսի ընթացքում Չուխաճյանի դաշնամուրային պիեսներից Ա.Բաբախանյանը նվագեց հենց «Քուզի ջրվեժը»: Իսկ 2012թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ ԳԱԱ Նիստերի դահլիճում տեղի ունեցած «Տիգրան Չուխաճյանի կամերային ստեղծագործությունը» համերգի ընթացքում Հայաստանում «Քուզի Ջրվեժը» էքսպրոմտի առաջին համերգային կատարումն իրականացրեց միջազգային և հանրապետական մրցույթների դափնեկիր, շնորհաշատ երիտասարդ դաշնակահար Հովհաննես Մանուկյանը[14]:

The virtuoso-concert piano works of Tigran Tchouhadjian.
Impromptu «Cascade de Couz»

The article reveals some interesting facts about creation, editions, recordings, and also about concert performances of this masterpiece. After historical and informational review, author presents the theoretical analize of the piece and give some methodic and practic advices fot its performance.

---

[12] Արմեն Բաբախանյանի հետ անձնական զրույցից:

[13] Հայ դաշնամուրային երաժշտության անթոլոգիա, Արմեն Բաբախանյանի կատարմամբ, CD 1, Տիգրան Չուխաջյան, 2012:

[14] Տես **Սատրյան Ա.**, Տիգրան Չուխաճյանի կամերային ստեղծագործության վերածնունդը. Պատմաբանասիրական հանդես, 2012, թիվ 3 (191), էջ 264-266: